Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 25-ի N 324 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների (այսուհետ՝ ֆինանսական միջոցներ) շրջանառման գործընթացը, և կարգավորվում են այդ գործընթացի հետ կապված հիմնական հարաբերությունները։

2. Ֆինանսական միջոցների շրջանառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով՝ միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա, որը նախատեսում է այդ միջոցների շրջանառումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) անվամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ բանկ) բացված միասնական գանձապետական հաշվով։

3. Միասնական գանձապետական հաշվով ֆինանսական միջոցների շրջանառման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նախարարության և բանկի միջև կնքված պայմանագրով (համաձայնագրով)։

4. Սույն կարգի պահանջները գործում են, եթե առկա է վարկային կամ դրամաշնորհային միջոցները տրամադրած օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության համաձայնությունը:

5. Ֆինանսական միջոցների հաշվին իրականացվող յուրաքանչյուր ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) համար այդ ծրագիրն իրականացնող գրասենյակի (այսուհետ՝ ԾԻԳ) անվամբ Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացվում և վարվում են արտարժութային, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված գանձապետական հաշիվներ (այսուհետ՝ հաշիվներ): Ֆինանսական միջոցների շրջանառման նպատակով ԾԻԳ-երը հաշիվներ են բացում բացառապես Հայաստանի Հանրապետության գանձապետարանում:

II. ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼԸ

6. Հաշիվ բացելու նպատակով ԾԻԳ-ը գրավոր դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության գանձապետարան՝ ներկայացնելով հետևյալ տեղեկությունները (փաստաթղթերը)՝

1) ԾԻԳ-ի կանոնադրության և պետական ռեգիստրի հաշվառման վկայականի պատճենները, հաշվից գործարք կատարելու նպատակով նախատեսված վճարային փաստաթղթերը հաստատելու համար օգտագործվող կնիքի նմուշը, ինչպես նաև ԾԻԳ-ի հարկ վճարողի հաշվարկային համարը.

2) ծրագրի անվանումը, որի համար բացվում է հաշիվը.

3) բացվող հաշվի արժույթը.

4) հաշիվը տնօրինելու՝ առաջին և երկրորդ կարգի ստորագրության իրավունք ունեցող և վերջիններիս փոխարինող անձանց տվյալները՝ յուրաքանչյուր անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, անձնագրի պատճենը և ստորագրության նմուշը:

Սույն ենթակետով նախատեսված տվյալները հաստատվում են ԾԻԳ-ի ղեկավարի և (կամ) վերջինիս փոխարինող անձի կողմից։

7. ԾԻԳ-ի տնօրենը կամ վերջինիս փոխարինող անձն է պատասխանատվություն կրում հաշիվ բացելու նպատակով Հայաստանի Հանրապետության գանձապետարան ներկայացված տվյալների (փաստաթղթերի) իսկության և արժանահավատության համար։ Եթե հաշիվ բացելու նպատակով Հայաստանի Հանրապետության գանձապետարան ներկայացված տվյալները փոփոխվում են, ապա ԾԻԳ-ը կատարված փոփոխությունների մասին տվյալները (փաստաթղթերը) երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության գանձապետարան։

8. Սույն կարգով նախատեսված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության գանձապետարան ներկայացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության գանձապետարանի համապատասխան ստորաբաժանումը ԾԻԳ-ի անվամբ բացում է համապատասխան հաշիվ (հաշիվներ)։ Բացված հաշվի (հաշիվների) մասին տվյալները (հաշվի անձնագիրը) Հայաստանի Հանրապետության գանձապետարանի համապատասխան ստորաբաժանումը գրավոր՝ հաստատված ստորաբաժանման կնիքով, տրամադրում է ԾԻԳ-ին։

9. Հաշիվ բացելու և այն սպասարկելու համար վճար չի գանձվում։ Հաշիվների քանակը և արժույթը որոշում է ԾԻԳ-ը։

III. ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

10. Հաշիվների սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գանձապետական հաշիվների սպասարկման հետ կապված հարաբերություն-ները կարգավորող նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն կարգով նախատեսված առանձնահատկությունները։

11. ԾԻԳ-ը կարող է իր անվամբ բացված հաշվից միջոցներ ելքագրել, ինչպես նաև՝ հաշվի մասին տեղեկություններ՝ հաշվից քաղվածքներ ստանալ (և արտատպել) էլեկտրոնային եղանակով։

12. Հաշիվների սպասարկման շրջանակում Հայաստանի Հանրապետության գանձապետարանը ԾԻԳ-երին մատուցում է բանկային ծառայություններ՝ բացի վարկերի և փոխառությունների տրամադրումից։ Հաշիվների սպասարկման, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների շրջանակը (տեսակները), այդ ծառայությունների մատուցման պայմանները, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով հաշիվների սպասարկման գործընթացի կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նախարարության և ԾԻԳ-ի միջև կնքված համապատասխան պայմանագրով (համաձայնագրով կամ վարչական ակտով)։ Պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը։

13. Հայաստանի Հանրապետության գանձապետարանը հաշվից միջոցները ելքագրում է այդ նպատակով ԾԻԳ-ի կողմից ներկայացված վճարային փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող մեկ բանկային օրվա ընթացքում։ Հայաստանի Հանրապետության գանձապետարան ներկայացվող վճարային փաստաթղթերի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը։

14. ԾԻԳ-ը կարող է իր անվամբ բացված հաշվով կատարված գործարքների մասին պահանջել գրավոր՝ Հայաստանի Հանրապետության գանձապետարանի համապատասխան ստորաբաժանման կնիքով հաստատված տեղեկատվություն՝ հաշվից քաղվածք։ ԾԻԳ-ը հաշվից քաղվածք ստանալու պարբերականությունը նշում է սույն կարգի համաձայն հաշիվ բացելու նպատակով Հայաստանի Հանրապետության գանձապետարան ներկայացրած դիմումում։

15. Հաշիվների սպասարկման շրջանակում Հայաստանի Հանրապետության գանձապետարանը ԾԻԳ-երի ֆինանսական միջոցների նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված նախնական հսկողության գործառույթներ չի իրականացնում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ